

1979 ի
ԱԿԱԳՆԵՐՈՒԹՅՈՒՆ ՍԻՆ յըրօ ԽՈԽՄԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
3-----3

Փետրուար 10, 1980

Ու ես զշեսդրի Հայց. Եկեղեցւոյ հովանիին ներքեւ մեր սիրելի հոգեւոր հովիւ, Արժանաշնորհ Տէր Դարեգին Քահանայ Գասպարեանի նախաձեռնութեամբ եւ առաջնորդութեամբ Հոկտ. 25, 1978ին կազմուեցաւ Աւագներու Խումբը, որուն անդրանիկ Հանդիպումը տեղի ունեցեւ նիւ Ռօշէլի մէջ, Ուզունեան Տունը, 20 հոգիներու մասնակցութեամբ։ Հաւաքոյթին նպատակը քացատրուելէ ետք տեղի ունեցաւ դիւանի ընտրութիւն յանձին Տիկ. Աղաւնի Սահակեանի, ատենապետու Հի, Տիկ. Սրբու Հի Թորոսեանի, ատենապարու Հի, եւ Տիկ. Մինա Մանուկեանի, գանձապահ։

Կազմութեան թուականէն ի վեր մեր խումբը ունեցած է ութ հանդիպումներ (գանց առնելով տարուան ցուրտ եւ տօթակ էզ ամիսները), որոնց ընթացքին ունեցած ենք կարճ պաշտամունք, դաստիարակչական յայտագիրներ, ընկերային ժամանց եւ ճաշկերոյթ։ Բոլորին ալ հրաւէ ըները, կարգադրութիւնները եւ նոյնիսկ շատերու վիխադրութեան միջոցը հայթայթուած է մեր Արժանապատիւ Տէր Հօր կողմէ։

Մեր ամսական հաւաքոյթները տեղի ունեցած են նիւ Շորքի գանազան Եկեղեցիներու մէջ, բացի մեր Եկեղեցին, ուր մեր հանդիպումները զուգահիպած են այդ Եկեղեցիներու Աւագներու խումբերուն Հետ, որոնց կարգին Պէյսայտի, Սահակ Տաճարի եւ Սր. Խաչի խումբերը։ Մեր Տէր Հայրը ամէն տեղ տուած է դաստիարակչական դասախոսութիւններ եւ ցուցադրած Հայաստանեան տեսարժան պատկերներ, եւ երգերով ու հոգեւոր ժամանցով հայթայթած հոգեկան խորին գոհունակութիւն բոլորիս, որուն համար երախտապարտ ենք մեր սիրելի Տէր Հօր եւ հպարտ կը զգանք իրմով իբրեւ մեր հոգեւոր հովիւը։

Յունիս 14ին 14հօգիներէ բաղկացած մեր խումբը հիւրասիրուեցաւ էզպրի Բարքի ծովեզերեայ մէկ ճաշարանին մէջ, հիւրամեծքրութեամբ ձան եւ Բօլին ժապակեաններու, որոնց շնորհակալ ենք ի սրտէ։

Ամէն ամիս Ներկայ եղողներ մէկական տոլար վճարում եւ շատերը այլ տեսակի նուիրատուութիւններ եւս ըրած են։ Ոնսեցած ենք անուշեղիններու եւ խմորեղիններու վաճառք Յուլիս 1ին, որմէ գոյացած է 88տոլար։ Տիկ. Սահակեանքանից բաղարջ հաց շինել եւ ծախելով աւելցուցած է մեր եկամուտը։

Մեր ծախսերու կարգին ունեցած ենք օթօպիւսի վարձք նիւ ձըրզի երթալու, դրոշմաթուութիւններ եւ Նեւեւ Եկեղեցւոյ ինքնաշարժի վիճակահանութեան համար տոմս 1979 Դեկտեմբերի վերջաւորութեան մեր գանձին մէջ կար 166.59 տոլար։

Մեր նպատակն է որոշ գումար մը գոյացնել եւ նոր Եկեղեցւոյ խօհանութին համար կարք մը կաթսաներ եւ ամանեղիններ գնել։

Փակել է առաջ կը հրաւիրենք ուրիշներ ալ որ մեզի միանան այս հաճելի եւ օգտակար հաւաքոյթներու համար։

Աղաւնի Սահակեան
Ատենապետու Հի

Սրբու Հի Թորոսեան
Ատենապարու Հի